ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հունվարի 18-ին կնքված ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 30.01.2017թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ 18.01.17թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածվել են 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
18.01.17թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 30 » հունվարի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ.Գրիգորյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.01.17թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3. 18.01.17թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան,Հյուսիսային պողոտա 1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1570003731650100
Հ/Հ 900011054013	ՀՎՀՀ 02589581
ՀՎՀՀ 02647057	«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	գործադիր տնօրեն՝
Ա.Սահակյան	**Գ.Գրիգորյան**
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«18» հունվարի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը	**Ընդամենը Տարի**
Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) ծառայություններ	4215	280 000	280 000	280 000	280 000	280 000	280 000	280 000	280 000	280 000	280 000	280 000	**280 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ
ք.Երևան,Հյուսիսային պողոտա 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն՝
Գ.Գրիգորյան

(ստորագրություն)
Կ.Տ